

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոլիարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկեղ հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱՎՈՒՆԿ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌԵԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Ирaвункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խոթարարութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ենքը միայն կը հրատարակուին անբող-
ջովիկ կամ մասամբ:
Խանութեան տողը 20 սանթիմ. երե-
փեւ անկի անգամներու համար 20 0/0
զեղը կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԱՐԵԱՆ ԳԻՆԸ

Արեւելի եւ նախնորհեցող թաղը,
խառնակ, նոր գոհ մըն ալ տուաւ
անցեալները:

Դէպքը շատ պարզ է եւ կրնայ
ամփոփուիլ երկու տողով:

«Հայ ուսուցիչ մը, Պ Թէր-
զեան, ամուսնացած եւ երեք զա-
ւակներու հայր, չի կարենալով
գանձել տեղւոյն թաղ. խորհուր-
դին վրայ ունեցած իր պահանջը,
եւ հետեւաբար՝ զրկուած ապրելու
տարրական միջոցներէն՝ անձնաս-
պան եղաւ»:

Այնոր մահը յեղափոխական գոր-
ծունէութեան մը հետեւանքը չէր.
անիկա թուրքին բիրին տակ ալ
չի մեռաւ, այլ իր տան մէկ ան-
կիւնը, լուիկ միջիկ, մէն միայնակ
իր վշտերուն հետ, իր վերջին ճգ-
նաժամին մէջ դէմ առ դէմ գտնուե-
լով ընտանիքի հօր պատասխանա-
տուութեանց եւ հոգեկան սուր տա-
ռապանքներու հետ: Նիւթին եւ
հոգիին մղած այդ ահաւոր պայ-
քարին մէջ, դժբաղդ ուսուցիչը,
զուրկ հոգեկան կորովէ, նիւթէն
յաղթահարուած, անպաշտպան եւ
խելայեղ, վերջ տուաւ իր քաջըշ-
ուող կեանքին, ընկերութեան ե-
րեսին սրսկելով, իբրեւ գերագոյն
վրէժխնդրութիւն, յուսահատ կնոյ
մը արցունքներն եւ վայելողներու
զուարթ գոռում գոչումին խառնե-
լով աղիողորմ ճիշն իր որբերուն՝
որոնք՝ իրենց վայնասունի դադար-
ներուն մէջ, կանխահաս խելամը-
տութեամբ մը, պիտի փորձեն ըմ-
բռնել բովանդակ մեծութիւնն ու
միանգամայն վատութիւնը իրենց
հօրը մահուան:

Ո՛չ մէկ յեղափոխական թերթ
պիտի յիշատակէ անոր մահը, ո՛չ
մէկ օտար թերթ թուրք կառա-
վարութեան պիտի վերագրէ եղի-
րական վախճանը հայ ուսուցչին՝
որուն՝ կեանքը զլացաւ իր հրա-
պոյրները, ազգն՝ իր պարտքը եւ
եկեղեցին՝ իր միջնորդութիւնը:

Բոլոր այս տարրերուն մէջ, սա-
կայն, մարդ մը կայ որ գերա-
զանցապէս կը զգայ նշանակու-
թիւնը այդ անձնասպանութեան,
որ յստակօրէն կըմբռնէ իրաց վի-

ճակը, եւ սրտի դառնութեամբ կը
լեցուի հանգէպ այն լիրբ անտար-
բերութեան՝ որով կը վերաբերուին
դէպ ի իր դասակարգը: Այդ մար-
դը հայ վարժապետն է, հայ մտա-
քի յեղափոխութեան հերոսը, ու-
րուն կը վստահի ազգը իր զա-
ւակներուն դաստիարակութեան
ու կրթութեան գործը, առանց ա-
պահովելու անոր՝ հայ վարժապե-
տին՝ զաւակներուն այսօրուան հա-
ցը, ու ձգելով—ի՛նչ դառն հեգ-
նութիւն—որ անիկա անձնասպան
ըլլայ, չի զգալու համար այլ եւս
իրենցներուն աղիւսարը տուայտու-
ները:

Հայ վարժապետը միայն, կար-
գալով իրենց գործութեան մէջ իսկ
ապստամբեցնող այդ տողերը, կըր-
նայ զգալ բովանդակ արհաւիրքը
որ կայ այդ մահուան մէջ, զի
ի՛նքն ալ գտնուած է, մէկէ աւե-
լի առիթներով, հոգեկան նոյն
այդ տրամադրութեանց մէջ, եւ ո՛վ
զիտէ, քանի՞նք մեր մէջէն, վեր-
ջին պահուն միայն ուշաբերած են
եւ ընկրկած՝ այդ աղետալի գաղա-
փարին առջեւ, թերեւս անոր հա-
մար որ զիրենք սրտապնդող եւ ի-
րենց կեանքն անուշոյնող պատկեր-
ներ ունեցած են իրենց շուրջ կամ
իրենց երեւակայութեան մէջ:

Թէրզեան ունէր այդ պատկեր-
ները՝ սիրով եւ համակերպութեամբ
տանելու համար կեանքի բոլոր
դառնութիւններուն, քաջութեամբ
գիմազբաւելու համար աշխարհի
բոլոր թաղականներուն կամ հո-
գաբարձուններուն անխառնութեանց:
Ի՛նչ որ ալ ըլլային կեանքի պայ-
քարին մէջ իր կրած զրկանքնե-
րուն որակն ու քանակը, ինք պար-
տէր անոնցմէ վեր բռնել իր կնոյն
ու զաւակներուն նկատմամբ ունե-
ցած սէրն ու պարտականութիւն-
ները:

Նպատակ չունիմ եւ չեմ ալ ու-
զիր գեգերիլ այս բարդ խնդրոյ
շուրջը՝ վերլուծելու համար թեր
ու դէմ եղած վարդապետութիւն-
ները: Անձնասպանութիւնը դա-
տապարտելէ կամ չքմեղացնելէ ա-
ռաջ՝ ես կը սիրեմ տեսնել միայն
ու մատնանիշ ընել այն գեղեցիկ
շանքերը՝ որոնք ի գործ կը դրուին

քաղաքակիրթ ազգերու մէջ՝ ար-
մատէն բառնալու համար նոյն իսկ
պատճառները աղէտքին:

Ես կը շատանամ իրողութիւնը
ներկայացնելով հանրութեան՝ հար-
ցնել թի ի՛նչ չափով կը մասնակ-
ցին ու կը հետեւին մեր առաջ-
նորդող մարմինները այդ գովելի
շանքերուն՝ զոր ուրիշները կընեն՝
բարեգեղութեամբ—սահմանափա-
կելով խնդիրը—կրթական պաշ-
տօնէից վիճակը:

Պատասխանը ահա ինչ կերպով
յուսահատական է:

Ցաւալի է հաստատել որ այս
ուղղութեամբ տակաւին քա՛յլ մը
չէ առնուած, եւ հայ ուսուցչին
վիճակը այսօր ա՛յնքան վատթար,
ա՛յնքան անկայուն է, որքան պատ-
ուելիական շրջանին մէջ: Շատ քիչ
պաշտօնական մարմիններ, ձեռ-
քերին խղճեցնուն վրայ, պիտի
համարձակին յայտարարել թէ լըր-
ջօրէն աշխատած են, գէթ իրենց
շրջանակին մէջ, բարձր կուտանի
մը վրայ պահելու համար ուսու-
ցիչները: Չանգուածին մեծագոյն
մասը տակաւին կը ներկայացնէ
նոյն անտաշ մակերեսը. մեր ա-
ռաջնորդող մարմինները, հազուա-
գիւտ բացառութիւններով, նոյն
արհամարանքով կը վերաբերուին
դէպի կրթական վաստակաւորները,
ունենալով միեւնոյն պատասխանը,
աւանդական ու անփոփոխ, անոնց
պէտքերուն ու տառապանքներուն
հանդէպ:

Շատ շատ, երբ անոնցմէ մին
ծայրայեղ յուսահատութեան մատ-
նուած, կը դիմէ անձնասպանու-
թեան, թերթերը՝ իբրեւ ցնցող լուր՝
կ'արձանագրեն իրողութիւնը. եր-
բեմն ալ խնդիրը կը յուզուի, կը
ծնծուի, բացատրութիւններ կը
պահանջուին, ալէն ու ձախէն կո-
կորդիլոսի աշխարհամեներ կը լըս-
ուին, եւ հուսկ ուրեմն, խնդիրը
կը մարի, երբ կը դադրի նորու-
թիւն մը ըլլալէ:

Եւ կամ այդ թերթերէն մին,
ինչպէս վերջին պարագային մէջ,
հանգանակութիւն մը կը բանայ,
ինչպատարարաւոր վարժապետին
այրիւն ու որբերուն. արդիւնքը
անոր «արեան գինն» է, «ընկե-

րութիւնը իր պարտքը կատարեց»:

Հապա վարժապետը, օ՛հ, անի-
կա երջանիկ է վասնզի իր «արեան
գինով» փրկեց իրենները անօթու-
թեան ճիրաններէն. անիկա՝ իր
յաւերտնական հանգիստին մէջ,
գերեզմանին ահաւոր լուրթեան
մէջ կ'արձակէ հառաչ մը, որ կը
վրդովէ ամենէն հանդարտ խիղճը
եւ կը դղրդէ հին, բարի ընկերու-
թիւնը իր հաստատութեանը մէջ:

Հայ վարժապետին այդ հառա-
չանքը հայ մտքի յեղափոխութեան
ամենէն ուժով ազդակը պիտի ըլ-
լայ:

Կրօն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիա 1/13 օգոստ 98.

Պատրիարքարանը եգիպտոսի առաջ-
նորդական ընտրութեան մասին մինչեւ
հիմայ դաքարիական լուրթիւն պահած
ըլլալով՝ Գահիրէի եւ Աղէքսանդրիոյ
ազգային պաշտօնական մարմինները
անցեալ շաբթու աղղու բողոքագրեր
զրկեցին Օրմանեան Պատրիարքին եւ
բացատրութիւն պահանջեցին պատրի-
արքարանի ընթացքին նկատմամբ:

Արժանահաւատ աղբիւրներէ առնուած
տեղեկութեանց համեմատ, Օրմանեան
Պատրիարք եգիպտոսի Գաւառական
Ժողովին ընտրական տեղեկագիրը չա-
բաթներով գաղտնի պահած է իրան
Ժողովէն եւ այդ միջոցին անհատական
գիմումներ ըրած է եւրոպայի մօտ, իբ-
րեւ թէ կանխաւ ձեռք ձգելու համար
Սուլթանին հաւանութիւնը: Պատրի-
արքը մտածելու էր որ երբ մինչեւ իսկ
ամենէն անկարեւոր գործի մը համար
Դրան կամ Սուլթանին հաւանութեանը
կանխաւ գիմում կ'ըլլուի, պատասխանը
գրեթէ միշտ մերժողական կ'ըլլայ:
Թերթերը կը խորհին թէ անշուշտ ի-
րենց շահերուն աննպաստ կէտ մը կայ
ներկայացուած առաջարկին մէջ, ապա
թէ ոչ հայերը հրաման խնդրելու պէտք
չկարի տեսնէին: Ասիկա հարիւրաւոր
անգամներ կրկնուած ճշարտութիւն
մը ըլլալով, չի հասկցուի թէ ի՛նչ հարկ
կար օրինական շաղէն չեղիլ եւ պատ-
ի պատ հնարքներով այս ընտրական
գործին յաջող ելքը կարգ մը դժուա-
րութիւններու մատնել:

Երբ եգիպտոսի Գաւառական Ժողովը
իր միաձայն քուէն տուաւ Իզմիրլեան
Սրբազանին, սա՛ հիման վրայ գործած
եղաւ որ պետական ո՛չ մէկ արգելք չի
կայ ն. Սրբազանութեան վաւերացման
մասին:

Իզմիրլեան Սրբազանի համար Օսմ.

կառավարութիւնը յայտարարած էր թէ ուխտի կ'երթայ Երուսաղէմ. անցագիրը ուխտագնացութեան անունով ելած էր. Երուսաղէմի միւթէսարը՝ Պօլիսէն հրահանգ ստացած էր ամէն յարգանք եւ պատիւ ընծայել հրաժարեալ Պատրիարքին՝ որչափ ատեն որ է. Սրբազնութիւնը հիւր մնայ քաղաքին մէջ. հրաժարեալ պատրիարքներու յատկացեալ թոշակէն աւելի դուժար մը որոշուած էր տրուել նախորդ Պատրիարքին: Այս ամէնքը պաշտօնական ապացոյցներ էին թէ ն. Սրբազնութեան անձին դէմ ո'չ մէկ արդելք, ո'չ մէկ խնդիր գոյութիւն չէր կրնար ունեցած ըլլալ: Եւ այս տեսակ պարագաներու մէջ ազգային պաշտօնական մարմինները պարտաւոր են գործել Սուլթանին կամ Դրան պաշտօնական յայտարարութիւններուն համեմատ: Եւ զիպտոսի հայերը օրինական չաւղէն եւեթ ընթացած եղան իրենց առաջնորդ ընտրելով Իզմիրեան Սրբազանը:

Օրմանեան Պատրիարք բնաւ պատճառ մը չունէր ինքն ալ միեւնոյն օրինական ճամբէն չի քալելու, պայմանաւ որ կարգապահութիւն եւ բարեկամեցողութիւն չի պակսէին իրեն. եւ ահա իր ձախող գործունէութեամբ ինչպէս Սիսի կաթողիկոսական խնդիրը նոյնպէս ալ այս առաջնորդական խնդիրը բերաւ արդի վիճակին հասցուց: Զարմանալին հոն է որ Իզմիրեան Սրբազան տակաւին Առաջնորդ չընտրուած, ինքն Օրմանեան քանիցս յայտարարած է թէ հրաժարեալ Պատրիարքին ո'րեւէ առաջնորդական պաշտօնի կոչուիլը ո'չ մէկ առարկութեան չի կրնար հանդիպիլ: Յայտարարութիւն՝ որ արձագանգ գտած էր Եգիպտոսի Գաւառական Ժողովին մէջ ալ:

Եգիպտոսի

ՊԱՏԿԵՐՆԵՐ

(2)

Երկրի գրգռող ու զեղուն կեանքէն հետեւ, մոռացութեան ու միայնութեան տուայտանքին ենթակայ, անցեալին թարմատար մարմաշովը կը տոչորէր: Իր այս ան նախանձելի վիճակին մէջ, անցեալի յեղեղով ցոլեցող պատմութեան հետ իր թղթակցութիւնն էր որուն ուժով փարեցաւ: Շատ գիշերներ, կէս-քուն, կէս-արթուն, կը մոլորէր յաճախ հայեցողական բարձր ոլորտներու մէջ եւ, արտա-մաշուք մտմտութիւններէ երբեմն միտքը թօթափած, կը խորհէր զըտնել վերջապէս միջոց մը որով հրնար ըլլար իր կացութիւնը մի քիչ բարւոյցել:

Դեռ Թուրքոյին վհատած չէր զգար ինքզինքը: Իր մտաւոր ու բարոյական կարողութեանց վստահ կը յուսար ուշ կամ կանուխ պաշտօն մը ձեռք ձգել: Պաշտօն մը կուզէր ան, արտին ու հոգիին մօտիկ պաշտօն մը որով ոչ միայն կարող ըլլար ապրուստը ապահովել՝ այլ և իր աղուոր զգացումներուն ալ գոհացում մը տալ: Քանի որ անկարող էր թերթ մը հիմնելու, իրեն էն սիրելի թուածը

Սիւլէն 30 Յուլիս 98.

Տեղւոյս Ս. Լուսաւորչեան Ազգ. երկսեռ վարժարանի ամսվերջի մրցանակաբաշխութեան հանգէսը տեղի ունեցաւ ամսոյս 12ին Ս. Եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ ազգայիններու խումբ բաղմութեան: Երկսեռ ուսանողներ արտասանութիւններ ըրին, երգեցին եւ արձակ գրութիւններ կարդացին, որք կ'ընդմիջուէին բուն ծափահարութեամբ: Աչքի կը զարնուէր աշակերտաց առողջանութիւնը եւ արտասանութեան շնորհ, որք սովորած էին զգալ ու զգացնել, մանաւանդ ընտել լարանի պղտիկները, որոնք տարի մը առաջ բնաւ հայերէն չէին գիտեր, սահուն ու մաքուր կ'արտասանէին ու կ'երգէին:

Մրցանակներու եւ պարգեւներու բաշխումէն ետք, վարժարանին տնօրէն՝ ուսուցիչ՝ Պ. Արմենակ Համամեան, կարգաց միամեայ տեղեկագիրը եւ տեղեկութիւններ տուաւ եղած բարեփոխութիւններու եւ այլոց մասին, նոյնպէս յայտնեց թէ՝ յառաջիկայ 98-99ի տարեշրջանին պիտի կազմուի դասարան մը եւս եւ ուսմանց ճիւղին վրայ պիտի աւելնան այլեւայլ դասեր (*):

Սոյն զարգացական հանդէսին չի մոռցուեցաւ Սահակ-Մեսրոպայ տօնը, որ անցեալ ամսոյ 25ին էր: Բարձրագոյն կարգի ուսանողներէն մին կարգաց արձակ գրութիւն մը երանելի հայրապետներու յիշատակին նուիրուած եւ բացատրեց անոնց կեանքն ու չափաւորութիւնը: Հանգէսը՝ ըստ սովորականին փակուեցաւ պահպանիչով: Հանգէսի աւարտումէն ետք առաջնորդուեցանք

(*) Վարժարանի ծրագիրը պուլկարական վարժարաններու ծրագրին ճիշդ նման է եղեր, միայն հայերէնի եւ պատմութեան աւելի ընդարձակ տեղ տրուած:

հիմայ ուսուցչական ասպարէզն էր. հոն գոնէ, իր ցաւերուն վրէժով, ամբողջ սերունդ մը շինելու դիւրութիւնները պիտի ունենար, կեանքի դառնութեան վրայ պիտի կրնար դաս մը տալ աշակերտներուն, և մխիթարութիւն մը գտնել իր խորունկ վիշտերուն: «Շրջանակի մը մէջ պիտի ապրիմ, կրտսեր ինքնիրեն, որ վերջապէս հայեցողութեանց և իտէալին աւանդէն աւելի մօտը գտնուողներն է և ուր մասամբ գաղափարներուս յագործը և զգացումներուս անունը կրնամ մատակարարել միշտ»:

Իր այս իղձը աւելի և աւելի կը զօրանար իր մէջ, երբ մանաւանդ կը տեսնէր որ կրթական գործի զեկափարութիւնը յանձնուած է աշակերտի ապիկար ձեռքերու որոնք իրենց պառակաւան նախապաշարունակներով, հնաւանդ, մզլոտած գաղափարներով ուրիշ բան չեն կարող ընել բայց եթէ մանուկ-ուսանողութեան ապագան դառնութիւններով խեղող: Այն բացատրելի զարթոյթ մը կը զգար նկատելով որ դեռ եւս մեծ յարգանք կը վայելին գրեթէ միայն հին ատենի այն դառնամած պատուելիները որոնք տեսակ մը փերեկակի խանութ կը սեպին աշակերտին գլուխը և հոն խառնի խուռն կը լեցնեն օգտակարն ու

վարժարանի սրահը, աչքէ անցունելու աշակերտութիւններու ձեռագործները: մէկ տարւոյ միջոցին աղջկանց ցոյց տուած յառաջիմութենէն շատ գոհ մնացինք:

Կ'իմանանք թէ՝ «Ուսմակալութեանց ընկերութեան» անդամութիւնը մտադրած են աղջկանց ձեռագործներու վրայ նորեր աւելցնելով վիճակասանութեան դնել, եւ Պատ. Հոգաբարձութիւնն ալ այժմէն իսկ հարկ եղած գիմուսներն ըրած եւ արտօնութիւն ստացած է, եւ քիչ ատենէն տոմսերը հրապարակ կ'ելնեն:

Այս առթիւ պարտք կ'զգանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնել Յարգ. Տնօրէնի ցոյց տուած եռանդին եւ աշխատութեան համար. նոյնպէս մեր խորին շնորհակալութիւնները «Ուսմակալութեանց ընկերութեան» անդամութիւններու եւ ի մասնաւորի Ազնուէնի Տիկնանց, Թագուրեան, Համամեան եւ Թահաֆեանի, որոնք անձնուիրաբար ձեռագործի ճիւղը դասասփսեցին կատարեալ կանոնաւորութեամբ:

Շրջիկ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Ձրոյցներէ զոտշանալը վստահելի անձնաւորութիւն մը մեզ խրկած էր անփոփոխ հրատարակելու խնդրանք, խոստանալով բացատրութիւնը յաջորդ թղթատարով հաղորդել մեզ:

Ինչպէս իր գրութենէն կը տեսնուէր, կերուայ թէ նա այդ լուրը միայն Շարժումի մէջ կարգացեր է, թէեւ մենք ալ Կ Պօլսոյ թերթերէն արտատպած էինք. բայց անկեղծութեան պարտք համարե-

անպէտք, վնասակարն ու պիտանին:

Այնպէտք գրաբարով, բնական ցական խնթ ու խելաւ վարդապետութիւններով տղոց միտքը խճողել, տառեր, անուններ և անցեալէն փոխած հէքեաթներ ուսուցանելը ոչինչ կարժէ, կը մտածէր և կը փափաքէր որ մէկ օր ինքը կարող ըլլայ ուսանողին ճանչցնելու Բնութիւնը, կեանքը, Ներկայն:

Իր միակ ցանկութիւնն էր ազգային վարժարաններուն տալ իրենց հոգիներ պատրաստողի, ներկարագիր կազմողի վսեմ դերը, և իր շուրջը սփռել անանկ մտաւոր զարգացում մը որ նորահաս սերունդը մղէ միշտ փնտռելու շարունակ այն բարոյական գոհացումները որոնք բանիմաց, զարգացած հասարակութեան մը անհրաժեշտ պահանջը կը սեպուին:

Բայց ո՞ր գտնել ատանկ պաշտօն մը, ո՞վ պիտի վստահէր իրեն սերունդի մը ապագան, դաստիարակութեան խորհրդաւոր ու հոգեզմայլ գործը...

Անանկ ժամանակ մը, ուր խրանամիական կապերը, անձնական կեղտոտ հաշիւները ու փոքրօրի նկատումները ընդարձակ սահմանի մը մէջ կը գործեն դեռ եւս մեր կրթական հաստատութեանց շուրջը, ամենեւին զարմանալի չէ որ քիչ ու շատ արժանիքի տէր

ցինք զոչոյցներէ զոտշանալը անմիջապէս հրատարակել ու Ձեյթութեան քաղաքներու նկատմամբ գայթակղեալ մտքերն բուժել. մենք մեր եւր զոհել պարտէինք այս նպատակին: Այդ լուրը մեր ալ արտատպած ըլլալու որոշ բացատրութիւնը յետաձգած էինք խոստացուած տեղեկութեանց մեզ հասնելուն, զոր ստացած ենք այժմ և կը հրատարակենք ստորեւ:

Բայց իր գոյութենէն ի վեր անկեղծութիւնը ատող թերթ մը այս առթիւ ալ կուգայ յարձակում գործել իրաւունքի խմբագրութեան դէմ և կը ջանայ մեր անկեղծութեան համար զսեպ անուանարկել՝ իբր արհեստակցական գր. ձեռն հաշիւներ ընող: Մենք ըսկիզբէն ի վեր չափազանց զգուշացած ենք այն բանէն, բայց այդ թերթը զսեպ գրգռելու մասնաւոր խորամանկութեամբ մը միշտ զայն կը կրկնէ, որպէս զի մեր հետ ալ կուրի բռնուի:

Բարեբախտաբար աշխարհ արարատ գիտէ թէ խմբագրութիւնս չէ զիջած նոյն իսկ իւր խմբագրատունէն իրաւունքի բաժանորդաց հասցէներու տպեալ թղթերն ու ծանօթ կարմիր նամակը ել ելքանք ընող արհեստակիցներն հրապարակաւ անուանարկել, որպէս զի չըտուի թէ արհեստակցական կուրի կը մղեն:

Ուստի ինչպէս մինչեւ ցարդ, ասկէ վերջ ալ մենք մեր պաղարիւնութիւնը պիտի շարունակենք

մարդիկ, իրենց կոչումին գիտակից ուսուցիչներ՝ չքաւորութեան ու անգործութեան մէջ իրենց ժամանակը սպաննեն, ու անդին, ողորմելի տիրացուներ սպանդանոցի մը վերածնն մեր վարժարանները: «Թաղողութիւնը լաւագոյնին կողմը չէ» հիմայ: Ճշմարտութիւն մը զոր հերքել անկարելի է դժբաղդաբար:

Քծելի, շողորդող, ամեն ըստոր հանգամանքի զիջանիլ. ահա. ւստիկ առ հասարակ այն պայմանները որոնցով միայն հնարաւոր է յաճախ գործի մը զլուխը գրտնուիլ:

Անստոյգ և աւաղելի վիճակի մը մէջ, անթի ծարաւ կը մզլուտին սովորաբար այն հազուագիւտ ու արժանաւոր դէմքերը որոնք կուզեն, ամեն գնով, իրենց անձը վեր պահել ամեն նուաստացուցիչ պայմաններէ և որոնց համար երգած է Ճիւղանին:

«Փորդը քաղցած, շորերդ հինցած, աղատախօս ո՞վ հեղինակ, Մի՛ վախենար, քեզ կը յիշենք երբոր մեռնիս այն ժամանակ»:

Միայն այս առ դուն հանապաղ բու մտքիդ տակ,

Աշխարհումս մէկ գին ունի թէ հաստ մանես, թէ բարակ»:

ՎԱՍՆԱ ՇԱՅՐԻՍՏԱՆ

և բնաւ չի պիտի զիջանինք պա-
տասխանել մեզ ուղղուած հայհո-
յութեանց :

13 Օգոստոս 1898

Նախորդ յօդուածիս բացատ-
րութիւնը պիտի տամ այսօր :—

Յայտնի է որ Զէյթունի վեր-
ջին ապստամբութեան միջոցին տե-
ղացիք երեք թնդանօթ գրաւեցին,
որոնցմէ մէկը կոտորուեցին և միւս
երկուքը անգործածելի վիճակի
մէջ վերադարձուցին կառավարու-
թեան : Վերջերս յիշեալ 2 թնդ-
անօթներուն տեղ կառավարու-
թիւնը ուրիշ երկու նոր թնդանօթ
խրկեց, միւսին մեծութեամբ
կառավարութեան նպատակն էր
արդարեւ մեծ տրամագծով թնդ-
անօթներ խրկել, բայց ճամբա-
ները անձեռնտու ըլլալուն պատ-
ճառով հրաժարած էր իր այդ
խորհրդէն : Խրկուած 2 թնդա-
նօթները Զէյթուն տարած են
ճիշդ այն կերպով ինչպէս որ տա-
րիներ առաջ տարած էին հինները :
Երկուստեք մը, բնիկ Զէյթունցի,
որ թնդանօթներու տեղաւորումէն
15 օր յետոյ քաղաքէն մեկնեցաւ
և ուղղակի հոս իջաւ՝ այս տեղե-
կութիւնները հաղորդեց մեզ :
Միւս կողմէ Եւրօպայի խմբագ-
րութիւնը իր տեղեկութիւնները
ստացած է Պօլսոյ Բիզանդիոն
լրագրէն որուն աղբիւրները կա-
ռավարական են և ինքնին յայտ-
նի է թէ ինչ մասնաւոր նպատակ-
նելով թիւրք կառավարութիւնը
կուզէ այդ օրինակ զրոյցներ հը-
րապարակ հանել : Այդ բանը նախ
թուրքերուն գոհացում կուտայ և
երկրորդ՝ հայերուն վրայ ալ խո-
նարհեցուցիչ տպաւորութիւն կը
թողու :

ԽԺԴԺՈՒԹԵԱՆՑ ՎԱՅՐԷՆ

Բաղէշի Ախլաթ գաւառի Գըծ-
ուակ գիւղէն գրուած Յուլիս 7
թուակիր նամակէ մը կը քաղենք
հետեւեալը, զոր կը գրէ Տապա-
վանք գիւղացի հայ կին մը իւր
ամուսնոյն :

«
Իմանաս մեր տուն բոլոր թալ-
ուան, մէկ ոչխար, մէկ եզ չու-
նինք և ոչ մէկ ուլ կայ, բոլորն
ալ գայլակեր եղան (թշնամիները
տարին) : Իմանաս որ ոչ թէ մեր
տուն մինակ այլեւ մեր գիւղին ա-
մենին մէկ կօշիկն ալ չը թողին և
ոչ մէկ շապիկ, այնպէս եղեր ենք
եէսիք ու շուտ որ չենք կրնար
դուրս գալ : Ես ու իմ երկու որ-
դիք այնպէս եղեր ենք գերի շի-
ւար ու չենք կրնար դուրս ելնել :
մեր ճար մնաց վերեւ Աստուած
ներքեւ դուն, որ քանի մը փարա
խաւրես մեր տուն որ մենք ալ կա-
րենանք ապրիլ : Կը խնդրեմ կըր-
կին որ այս նամակ հասնելուն պէս
հոգ տանիս ու մեր խեղճութիւն

հոգաս, շատէ չէ բիշ մը մեզի
նայիս, քանի մը փարա խրկեսք
եղբարց : Այս 7 տարի է գացե-
րես, դուն բնաւ ումուր չես եղեր
հիմա ճարէ կտրուած անոր հա-
մար կը գրեմ որ ումուր եղիս ու
օր մը առաջ այս նամակին պա-
տասխան քանի մը փարայով թէ-
լեկրափով խաւրես : Ես գարունէ
ի վեր հօրս տունն եմ »

« Միւս կարօտով »

« »

Այս նամակը Տապավանք գիւ-
ղի վիճակը կը պարզէ : Իսկ նոյն
Ախլաթ գաւառի Գիւղուտ գիւղէն
ուրիշ նամակ մը ալ եկած է, որ
Սօխուտ և Գիւղուտ գիւղերուն ա-
ւերումն ու կողոպտուիլն կը նկա-
րագրէ :

Նամակներէն և ոչ միոյն մէջ
չէ յիշուած թէ յարձակողներն
ոստիկաններ, զինուորներ են թէ
Քիւրտեր : Անշուշտ եթէ Քիւր-
տեր լինէին նամակներու մէջ չի
յիշուել պատճառ չի կար, բայց
քանի որ այս մասին լուծիւն կը
պահեն, սա որոշ ապացոյց մ'է թէ
աւաղակներն նոյն իսկ կառավա-
րութեան զինուորներն ու ոստի-
կաններն եղած են զորս նամակա-
գիրք յիշելէ կըզգուշանան :

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Քէօստէնէի Թաղ. Խորհուրդը կը
խնդրէ մեզմէ հրատարակել հետեւեալը.

Թիւ 214.

Թաղական Խորհուրդի շնորհակալու-
թեամբ կը ծանուցանէ թէ քաղաքիս
ազգայիններէն հանգուցեալ Տիար Ա.-
սատուր Յիշնկեանի յուղարկաւորու-
թեան առթիւ հետեւեալ անձինք բա-
րեհաճած են Ս. Եկեղեցւոյ սեփական
ծաղկեպսակներէն գնել ուրիշ գոյացած
է 365 ֆրանքի գումար հասոյթ մը :

	Փր.
Տեարք Ժիպրաիլ Յրէնկեան	50
» Միսաք »	50
Տիկին Մանիկ Ն. »	50
Տեարք Գ. Ե. Գ. Մանիսալեան Եղբ.	40
» Եղիա Գրիգորեան	40
» Տիգրան Էմիրզեան	30
» Կարապետ Բօլաթեան	30
» Յ. Ե. Պ. Պետրոսեան	20
» Մարգարեան Ե. Գէորգեան	20
» Գրիգոր Գրիգորեան	15
» Թադուր Պէնլեան	10
» Լեւոն Սեղբոսեան	10
	365

Նաեւ շնորհակալութեամբ կը յայտ-
նեմք յետագայ նուիրատուութիւնները
որք եղած են Ս. Եկեղեցւոյս ի վերեւ
յիշեալ յուղարկաւորութեան առթիւ
փոխան ծաղկեպսակի.

Տեարք Յակոբ Զամպաքեան	30
» Յակոբճանեան Եղբարք	50
» Նազարէթ Թորոսեան	20
	70

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Ատենապետ Ատենապետ
Լ. Սեղբոսեան Տ. Ս. Էմիրզեան

ԼՐԱՔԱՂ

Թօփանէի կայս. նպաստամատոյց
Յանձնացողովը այս անգամ եւս 1,000
օսմ. ոսկիի գումար մը զրկած է Ազգ.
Պատրիարքարան, գաւառացի կարօտե-
լոց բաշխուելու համար :

— Ազգ. վարչութեան կողմէ Գարա-
կէօզեան Գրիգոր Էֆէնտիի զրկուած
վերջնագրին պայմանաժամը լրացած եւ
ոեւէ պատասխան մը առնուած չըլլա-
լով, Խառն Ժողովը բանակցութիւն-
ները բողոքովին խզելու որոշում տը-
ւաւ իր չորեքշաբթի առաւոր նիստին մէջ :
Այս օրինակ որոշումներ քանիցս տըր-
ուած եւ ես առնուած ըլլալով, ասոր
ալ վերջնական հանգամանքին վստա-
հութիւն չի կրնար ըլլուիլ :

— Խառն Ժողովը գումարուեցաւ Դշ-
օր Ղալաթիոյ խորհրդարանը, նախա-
գահութեամբ Ս. Պատրիարք Հօր եւ ա-
տենապետութեամբ Տատեան Յարու-
թիւն փաշայի :

Ժողովը զբաղեցաւ գլխաւորաբար
Գարակէօզեան կտակի եւ Եգիպտոսի
առաջնորդական ընտրութեան խնդր-
ներով : Բայց ինչ ըրաւ. Յայտնի չէ :
— Կը լսենք թէ Գուրուպէի կրօ-
նափոխութեան շարժման պարագլուխ
Ամբակում վարդապետ Ազգ. Պատրի-
արքարանի կողմէ իրեն նկատմամբ
տեղի ունենալիք կարգադրութեան
խոյս տալու համար, Հռոմէականներու
Պատրիարքարանը ապաստանած եւ իր
գիմումը ընդունուած է Տ. Ազարեան
Պատրիարքին կողմէ :

— Թուրքիա եւ Անգլիա. — Լոնտոնէն
կը հեռագրեն թէ Կ. Պոլսոյ անգլիա-
կան նորընտիր զեսպան Սըր Նիքոլաս
օ'Բանոր հրաման ստացեր է այս շաբ-
թու իր պաշտօնատեղին ուղեւորելու :
Դեպքանը հետը կը բերէ Վիքթորիա
Թագուհին մէկ նամակը, Սուլթանին
մատուցանելու համար : Սըր Նիքոլաս
Լօրտ Սօլզբերիի հետ տեսակցելով, հը-
րահանգներ ստացեր է :

— Պէրլինէն հեռագիր մը կ'ըսէ թէ
Ֆէրտինանտ իշխանը խնդրեր է գեր-
ման կառավարութիւնէն որ մէկ քանի
պուլկար սպաներ գերման բանակին
մէջ ծառայեն, սակայն կայսեր կողմէն
այս մասին տակաւին հրահանգ մը չէ
տրուած :

— Ողորդմները. — Էտիրնէէն կը գրեն
օգոստ. 5/17 թիւով. — Քաղաքային
բոլոր արուարձանները, որոնք գետե-
զերքի մօտերը կը գտնուին, երէկ առ-
տու շուրերու տակ մնացին սոսկալի
ողողումէ մը որ այս եղանակին համար
տարօրինակ է : Բարեբեր դաշտերը ու-
ղողուեցան եւ հեղեղները քնցին տա-
րին ցորենի դէզերը, եգիպտացորենի
տունկերը, սեխերը եւ ձմերուկները :
Վնասը շատ մեծ է :

— Քաղաքիս Աղքատախնամի նախ.
կին առնեապետ Պ. Գր. Սիմոն.
եան նոյն ընկերութեան Գործա-
գիր Ժողովոյ անդամոց հմանց վե-
րագրուած զեղծմանց մասին բա-
ցատրութիւն կուտայ մասնաւոր
նամակաւ մը զոր յաջորդ թիւով
պիտի հրատարակենք :

Պր. Ատենապետէն կը խնդրենք
որ հրապարակէ նաեւ վերջերս յայտ-
նուած այն զեղծումները որոնք
կանխաւ գործուած են «Աղքատա-
խնամ» ի հաւաքչին կողմէն :

— Խմբագրութեանս ուղղուած
պաշտօնական նամակ մը կը ծա-
նուցանէ թէ Մարտէլի մէջ ար-
դէն գոյութիւն ունեցող հայկա-
կան ընթերցարանի ընկերութիւնը
վերականգնուած է :

— Այս շաբթու Ռուստուգէն ըս-
տացանք 3 նամակներ որք Պ. Սա-
պահ-Գիւլեանի գէմ գանգատներ
կը պարունակեն : Բայց այդ խընդ-
րոյ առթիւ մեր վերջին թիւերուն
մէջ բաւական բաներ գրուած ըլ-
լալով աւելորդ համարեցինք վե-
րստին զբաղեցնել մեր ընթեր-
ցողներն : Սակայն ինչպէս նամա-
կագիրներն կը յայտնեն, եթէ Պ.
Սապահ-Գիւլեան այս տարի ալ
իր պաշտօնը շարունակելու ըլլայ
շատ մը ծնողքներ իրենց զաւակ-
ներն օտար վարժարաններ պիտի
խրկեն եղեր : Այս շատ ցաւալի է
և Պատ. Թաղ. Խորհրդոյ ուշադ-
րութեանը կը յանձնենք :

— Արմենիայի մէջ հրատարակ-
ուած ամերիկեան նամակէ մը կը
քաղենք հետեւեալը .

Օրագիրը լուր կը բերէ, «Նա-
խագահ Մ. Քիւրի վաշինկթոն
հրաւիրած է նշանաւոր քաղցրա-
ձայն երգիչ Գէորգ Պաղտասար,
եանը, իւր եկեղեցիին մէջ երգել
տալու համար » :

Այս հրաւերին վրայ Տ. Գէորգ
Պաղտասարեան կը մեկնի վաշինկ-
թոն : Նախագահ Մ. Քիւրի գոհ
մնացած է անոր երգեցողութենէն
ու պատուով վերադարձուցած է
իր բնակավայրը : Տիար Գէորգ
(հրապարակախօս Տիկ. Պաղտա-
սարեանի որդին) Պօսթօնի քան.
կըրկէշն եկեղեցւոյ մը երգիչ է ու
իր ծնողաց հետ Պօսթօն կը բնա-
կի : Բնիկ Պօսեցի է նա. այժմ
14 տարեկան կը լինի և լաւ ա-
պագայ կը խոստանայ :

— Էսթէրհայի թուղթերը պաշ-
տօնապէս քննելու համար նոր յանձ-
նաժողով մը կազմուած է :

ԲԵՍՄԻ ՀԱՅՏՈՒՏԼԸԳ

Ախլաթ գաղասընտա իճրա օ.
լընան մէզալիմի իքի հափթատան
պէրու թէլէկրաֆլար՝ պիր աղ եէք
տիկէրինէ մուպալէն՝ ֆագաթ հէր
պիրիտէ 8 քէօլին խարապիյէ-
թինի իթիրաֆ իթմէքտէ իտիլէր,
եպլընը Սթանպուլ թիւրք մէն-
պալարը՝ տան նէշէթ իտէն էվրա-
զը հավատիսալթ վուգուաթըն է-
լան թաստիգ օլընմատըղընը եա-
պուրարտը :

Նիհայէթ պու կիւն խարապ օ.
լընան քէօլէրտէն էլիմիզէ եէթի-
շէն մէքթուպլէր հազըղաթը հա-
լի մէյտանա գօյմագտա օլուպ,
սնէլտէն պիրի տախի պու նուս-
խէտէ միւնտէրիճ տիր : Մէղքիւր
քէօլէրին սապըզ հալլէրինի պի-
լուպտէ, պու մէքթուպլէրի թէտ-
զըզ իտէն ապա քէնտիսինի թու-
թամաղ քէտէրնոք պիր ահ չէք-
մէքտէն : Օլ չէն զէնկին քէօլէր
պուկիւն վիրանէ օլուպ, սիֆիլ
քէօլիլէլտէ պիրէր կէօմէք, պի-
րէր չարըզ գալմամը տըր, էօյ-
լէթի «չըպլագըզտան տէշարը չը-
գամըյօրըզ» եազըյօրըր : Պուն-
տան 10-11 սէնէ էվիլէ մէքքիւր

քէօյլերտէ ՈՐուսա պէյ նամ մէջ-
հուր հայտուտ ավանէսի իլէ իճ-
րաի հաշարաթ իթմիշ վէ Մանուկ
վէ Յակոբը Տապապանք քէօյլին-
տէն հօլաիւրմիշ իտի իսէտէ, ու-
մուս գըրկընլար էանասընտա հէր
նէ սէպէպէ մէպնի իսէ մէպըիւր
քէօյլէր բէք զարարտիտէ օլմա-
մըշլարտը. իշթէ շիմտի հիւքիւ-
մէթի զալիմէ էրմէնիլէրին էքսէ-
րիյէթ թէշքիլ իթմէքտէ օլտըղը
պու գազալը տախի խարապ իթ-
միշ օլտը:

Սայէի առաւելթվայէտէն եէնի
եէնի մահպիսհանէլէր ինշասը իլէ
իսլահաթ իճրա իտէյօրըղ տէյնէն
Սթանպօլ ճէրիտէլէրի պիր ազտէ
պու իսլահաթտան (") պահս իթմէ-
լէր օլմա՞ղ մը:

Էրմէնի գըրկընլարընտան տօ-
լայը մէսուլիյէթի գապուլ իթմէ-
յէն Երտըղ իտարէսի Ախլաթ գա-
զասընըն թախրիպինի նէ՞ սէպէ-
պէ համլ իթմէք իսթէյէճէք: Քէն-
տի հալլէրինտէ գալմըշ օլան պու
պիշարէ քէօյլիւլէրին զարար ու
զիյանլարը քիմին էօտէնմէսի լա-
զըմ կէլէճէք: Իշթէ պու տէֆա
պիգզաթ հիւքիւմէթ քէնտի գապ-
թիյէլէրի վասիթասը իլէ 8 բա-
րէ քէօյի սօյըլմըշ սօղանա չէվիւր-
տի: Թապաալարընըն զարարլարը-
նը թալէպ իտէն Սթանպօլ էլշի-
լէրի, թիւրք թապաասը պուլլըն-
մագ պէտպախտըղընա տիւշար օլ
մուշ օլան շու սէֆիլ խրսթիյան-
լարըն հազարընը տախի ինսանի-
յէթ նամընա մուհաֆազա իսթէր
լէր օլմա՞ղ մը: Պու սօն մէպուլիմ
թիւրք հիւքիւմէթինին ասլէն վէ
գաթընէ իսլահաթ իճրա իթմէղ
վէ իտէմէղ օլտըղընա եէնիտէն պիր
տէլիլի գալի տէ՞կիլ մի տիր: Բէս-
մէն էշգըլալը գտէն շու հայ-
տուտլարըն էլինտէն Շարգ խըրա-
թիյանլարը գուրթարընը պիր մու-
էսիր նիտա չըգարմանըն տահա
վագթը սաաթը կէլմէ՞տի մի:

Էվլէլէճէ տախի տէմիշ օլտըղը-
մըղ կիպի, Բուսիտտան ավտէթ
իթմէքտէ օլան էրմէնի մուհաճիր-
լէրին կէլմէսի իշիւն կէօղլէրինի
գօրգուլթմագ վէ բուս տէվլէթի-
նին թալէպինի թէէսիր իթտիր-
մէք մագսէտի իլէ Պապը Ալի բէս-
մէն պու մէգալիմի իճրա իթտիր-
տի: Չար հաղըթլէրինին արգու-
սընա թիւրքլէր պու հազարէթ
լէ ճէվապ իթտիլէր: Էվլէթ պու
հազարէթ տօղրուտան տօղրու Չա-
րա գարըն տըր: «Վաթանլարըն-
տա հալպու մէքքէզտէ իքէն Չար
հիւքիւմէթի սէֆիլ մուհաճիրլէրի
թիւրք եաթալանլարընա գուր-
պան օլմագ իշիւն մը եօլլայօր»
տէյու պիր սիւվալ իթմէք աճա-
պա խաթա մը իթմիշ օլմա՞րըղ:

ՏԱԽԻԼԻՅԷ

—Թան կազէթասընըն Սօֆիա
մուխպիրինին պէյանընա կէօրէ,
վիւքէլա րէյիսի Մ. Սթօյիլթըն

խաաթալըղը Բէթէրսպուրկտան
ավտէթինտէն պէրու տահա զիյատէ
շիտտէթլէնմիշ օլմաղլէ թէքրար
թէպտիլի հալա իթմէկէ կիտէճէք
վէ եազընէն շիֆայապ օլմաղ իսէ
իսթիֆասընը վէրէճէք իմիշ:

—Բընա հաղըթլէրի վիէննա-
տա վէ Գարսպատ ըլըճալարընտա
15 կիւն գալաճագ տըր:

—Վարնա էհալիսինտէն 3-4 էվ-
լատ սահիպի օլան սապըղ ճօրա-
րիսու Գազաֆօնըն զէվճէսի կէշէն
ճուսաա կիւնիւ խանէսինտէ պա-
շընտան վուրուլմըշ վէ էօլմիշ պու-
լընտը: մէսմուսթա կէօրէ՞ գա-
թիլի քէնտի զէվճի իմիշ: Գազա-
ֆօնըն ազլընա պիր գաշ ալտան
պէրու խըֆէթ կէլմիշ վէ պու սէ-
պէպտէն մէմուրիյէթինտէն չըգա-
րըմըշ ըտը:

—Եաղմուրար վէ սէլլէր սէպէպի
իլէ Ֆիլիպէտէն Եամպօլա գատար
շըմէնտըֆէր հօլլարը պիր հաֆ-
թատան պէրու պօղուլմըշ օլմաղլէ
թըրէն իշլէմէլէրտէ տիր: Փագաթ
պու կիւն հարըն թէքրար իշլէմէկէ
պաշայաճաղընը պիգէ հաղը յօրլար

Մ. ԱՄԷՐԻԿԱ — ՍՊԱՆԻԱ

Ամէրիգալընտա Մանիլայը մու-
հարէպէ իլէ ալմալարընտա քէն-
տիլէրինտէն 5 էօլիւ վէ 45 հարէլի
վէ Սպանիօլլարտան 150 էօլիւ վէ
300 հարէլի տիւշմիշ:

Սպանիա օրտուսը Սիալէստէն
չէքիլիւր չէքիլմէղ, եէրլիլէր տէր
հալ Ամէրիգա պանտէրալարընը
աշարար: պուսնոն իւզէրինէ ըՍ-
պանիօլ ասքըլէրի խըրալանարագ
կէրի տէօնիւպ, էհալիտէն 90 քի-
էօլտիւրիւլէր: Սպանիօլլարըն
պու վահշիլիկինէ նէ՞ տէմէլի:

Ճաշընալ տը Մ. Բէթէրսպուրկ
Ֆիլիպին առալարը իշիւն տէյօրքի,
էվրօսանըն նէպարէթի վէ գօնթ-
րօլը ալթընտա օլմագ իւզըն օթօ-
նօմի իտարէսի վէրիլէպիլիւր:

Մ. Ամէրիգա տէնիլ գուլթէթինի
տահա զիյատէ արթըրմագ իշիւն,
50 միլիօն տօլար մէսարիֆ իտուպ,
15 առէտ հարպ սէֆինէսի վէ պիր
թագըմ տէ նագլիյէ վարօրլարը
եաղտըրմագ նիյէթինտէ իմիշ:

Գուպա ասըլայը Ամէրիգալընտա
գարըն զըտտիյէթի թէրթ իտէ-
ճէքլէր վէ ամէրիգա ասքէրլէրին.
տէն 100,000 քիշի աղատ օլընա-
ճագ ըմըշ:

Սանթիակոտան վիրուտ իտէն
պիր թէլէկրաֆա նագարէն եէրլի-
լէր սպանիալը էօլիւլէրտէն 770
քիշի հազմըլար: ճէսէտլէրին հան-
մասընտան հուսուլա կէլէն ֆէնա
գօգու սըհէթէ բէք մաղարաթլը
օլմաղլէ պէրապէր, հիւքիւմէթի
մահէլիյէ էհալիսին պու մուսմէ-
լէսինէ գարըն կէլմէյի թէհիլէլի
կէօրմէքտէ տիր:

Կ Ի Ր Ի Տ

Պապը Ալինին կիւրիտէ եէնի
ասքէր հօլլամագ իշիւն էլշիլէրէ

վէրմիշ օլտըղը բրօթէսթէ ճէվա-
վապէն ինկիլթէրա, Ֆրանսա վէ
իթալիա էլշիլէրի հիւքիւմէթլէ-
րինտէն ալտըղլարը թալիմաթ
իւզըն, տէվլէթլէր ամիրալլարա
վիրմիշ օլտըղլարը թալիմաթը
թէպտիլ իթմէլէճէքլէրինի գաթի-
էն Պապը Ալինյէ պիտիրմիշլէր
տիր:

Իսլամլար Բէթիմօ ճիւլարընտա.
քի ասքէր գօրտօնընը պօղուպ ի-
լէրի կէշմէք իսթէմիշլէր իսէ տէ,
Բուս ասքէրլէրի անկէրի կէրի
սիւրմիւշլէր տիր:

Ճմիրալլար թիւրք ասքէրլէրին
միւտալիլէ իթմէլէճէքլէրին թահլը
գարարա ալուպ, պու գարարը
Ճէվատ բաշայա թէպիլիլ իթտիլէր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԷ

Չար վէ Չարիցա հազարաթը
Մօսկուսա կիթտէքտէն սօնրա
Լիվաթիայա (խըրըմ) կէլէճէքլէր:
Չարիցա հաղըթլէրի պուրաւտա
վաղը համլ իտէճէք իմիշ:

Պու միւնասէպէթլէ Սթանպօլ-
տան Շաքիր բաշանըն րիյասէթի
թահլընտա պիր հէյիէթի մախ-
սուսէ կէօնտէրուպ, Բուս հիւքմ-
տարընըն թիւրքիս սինօրլնա եա-
զըն կէլմիշ օլմալարընտան տօլայը
Սուլթանըն սէլամը տօսթանէսինի
թագտիմ իտէճէք իմիշ:

—Ալմանիա իմքէրաթօրը կիյ-
եօմ Երուսաղէմէ կիթմէլտէն էվ-
վէ իլմալիա գրալը իլէ վէնէտիկ-
տէ կէօրիւլէճէք, վէ պիլալիլէր
Լիվաթիայա Չար հաղըթլէրինի
զիյարէթ իտուպ, իքի կիւն մի-
սաֆիր գալաճագ տըր:

Պու խուսուստա Տէլլի թէլիկ-
րաֆըն Բէթէրսպուրկ մուխպիրի-
նին պէյանընա կէօրէ, իմքէրա-
թօր կիյիօմ քէնտիսի Չար իլէ
կէօրիւլմէք իշիւն արգու պէյան
իթմիշ: զիրա ախիւրէն տէօնէն
բօլիթիլալարտան հուսուլա կէլմիշ
օլան պաղը շիւհէլէրին ինտիֆա-
սընա չալըշաճագ ըմըշ: տահա
տօղրուսը կիյիօմ եալտըղը սէօղ-
լէր իլէ Չարը ուլուտուպտէ, քէն-
տիսի տիկէր թարաֆտան թիւր-
քիտա երիկինի պօյամաղա չա-
լըշաճագ տըր:

—Բուսիանըն թիւրքիտան
թալէպ իթտիկի մուհաթէպէ թագ-
միւնաթընտան միւթէպաղը մաթ-
լուպընա պէտէլ, Օսմանը պան-
գասը ալթը թագսիթտէն էօտէ-
մէք իշիւն 1,016,000 լիւրալը սէ-
նէտլէր իմպալամըշ տըր: պու մէպ-
լաղա պէտէլ հիւքիւմէթ էօշիւր
հասըլաթը իլէ պանգայը թէմին
իթմիշ օլտըղը սօն թէլէկրաֆ պիլ-
տիրմիշ տիր:

—Տիւնքի աժանս պոշկար թէ-
լէկրաֆընա նագարէն Էտիրնէտէ
Պուլկար մէքթէպլէրինէ նէգարէթ
իտէն հէյէթին րէյիսի գաթլ օ-
լընմըշ:

—Չինտէ բուս ինկիլիլ թէէսի-
րինին իլէրլէնմէսի պապընտա շու

իքի տէվլէթին հէքտիկէրինէ օլան
րէգապէթինտէն (Իրցուս) պահս
իտէրէք Սթանպօլա տէմէք իս-
թէյօր քի, ինկիլիլէր Չինտէ
տիկէր տէվլէթլէրտէն զիյատէ հէր
ալմագ վէ թէէսիր եայմագ իսթէ-
մէլլէր, Չինին թագսիմի իշիւնտէ
բէք արգուքէշ տէկիլլէր, Փագաթ
պաշաա միլլէթլէրտէն կէրի գալ-
մագտէ օլմագ: պու սէպէպլէ ին-
կիլիլ տէվլէթի տիկէրլէրի՝ պաշ-
լըն « Բուսիա իլէ՝ իթթիֆագլէ
Չինտէ հուգուգընը մուհաֆազա
իթմէկէ վաղիֆէտար տըր: Էկէր
պաշալարը սուրէթի տօսթանէ-
տէ ինկիլիլլէր իլէ պիր գըլաստա
կիթմէք իսթմէլլէր իսէ, պիլ
տախի տիկէր եօլլէ հագգըմըղը
մուհաֆազա իթմէկէ հաղըրըղ:

ՉԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

վառնա 1 Աղլարսու
Պուղուսայ
վալօն
Արապա, լիպրա 55-60 հէքթօլ-
8-41 ֆրանք

Արապա եկնի
Լիպրա 42-50, հէքթօլ 4.60-5.20ֆ.
Յասուլէա
100 օգ. 17-24 ֆրանք՝ մալա կէօրէ
Եռլաֆ
Արապա 1-2 ֆիյաթ 3.60-4 ֆր.
Տարլ
Արապա 1-2 լիպրա 58-60 ֆիյ.
7-7.50:

Կիւնտէլ 200—250 արուպա պուղ-
տայ, 50-60 արապա արապ կէլմէք-
տէ տիր: Յասուլէա 30-40 արապա:
Արապա մուսթէլէսի՝ Նարօլէոն
21 ֆու. հիսապը իլէ տիր:

ՊԱՏՈՒԱՐԹԱՆ ԴՊՐՈՑՈՒԱՆ
ՀՈԳԱՍԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ, Եթէ
ուսուցչի պէտք ունիք, եթէ ձեր
ունեցածներէն դժգոհ էք, գիւնեք
ինձ:

Յարմար առիթն է օգտուելու
տրամադիր, հմուտ և փորձառու
ուսուցչին: Երոնք պատրաստ
են քննութեան ենթարկուիլ և մըր-
ցումով ստանձնել իրենց պաշտօն-
ները:

Իմ ներկայացնելիք ընտրելին.
բուս մէլ կան վարժարանի Տնօրէ-
նութիւն վարելով հանգիստ՝ զլիա-
ւոր դասեր աւանդելու օգնական
և երաժիշտ դասատու լինելու կա-
րող անձեր: Բանակցութեան հա-
մար դիմել:

Գ. ՏԷՓԵՄԷՃԵԱՆ-ՌՈՒՍՃՈՒԲ

ԱԶ Դ

Ազգային կեդր. Վարչութեան
Ուսումնական Խորհուրդէն վկայ-
եալ փորձառու ուսուցիչ մը պատ-
րաստ է Պուլկարիոյ կամ արտա-
սահմանի ազգային վարժարաննե-
րէն մէկուն մէջ տեսուչ—գրասի-
արակի և կամ ուսուցչի պաշտօն
ստանձնել:

Ճիւղերն են հայերէն և ֆրան-
սերէն լեզուները, պատմութիւն,
աշխարհագրութիւն, ի հարկին կ'ա-
ւանդէ նաեւ բնական գիտութիւն-
ները մանկավարժական գիւրուսոյց
մէջ տնտեսութիւն:

Պայմաններուն համար բանակցիլ
ուզողի խմբագրութեանս հետ: